



Ագդարարու թեան Trumpet's Sound **փող**

49-ԻԴ ՏԱՐԻ, ԱՌԱՏԱԼԻԱ
ԾԱՌՏ - ԱՊՐԷԼ 2018



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր բերք

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրայ Գուլյունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Աստուծոյ հնազանդիլ 3
Հովիւ Հրայ Գուլյունեան

Ստեղծուած եւք Անոր հաճութեան
համար (2) 5
Հովիւ Բաֆֆի Չափարեան

Եկե՛ք սուտ չխօսիլք զիրար. 8
Վարդան Սարգիսեան

Յիսուսը կ'երեւայ 10
Տոն Սրորմըր

Յնազանդութեան դասը 14
Քաղուած

Լուրեր ACM-ի գրասենեակէն 15
ACM-ի յանձնախումբ

Կազմի նկարը՝ Տարեւի վանք, ACM 2017թ.

ACM-ի աղօթքի սիււթեր

- Աղօթե՛ք Աւստրալիայէն Հայաստան ուղղեւորուող մեր N18-րդ բեռնարկղի համար:
- Աղօթե՛ք մեր շատ հիւանդներու եւ անոնց աջակցութիւն ցուցաբերելու միջոցներուն համար:
- Աղօթե՛ք Սուսալեռի եւ Վանաձորի մէջ ընթացող սնունդ տրամադրելու ծառայութեան համար:
- Աղօթե՛ք մանուկներուն և երիտասարդներուն համար, որոնց կը հասնինք Աւետարանով:
- Աղօթե՛ք մեր աշխատակիցներուն եւ անոնց ընտանիքներուն համար:
- Աղօթե՛ք Էջմիածին քաղաքի մէջ Աստուածաշունչի սերտոհոլութեան խմբակին համար, եւ մաեւ աւելի ընդարձակ պայմաններու մէջ հաւաքուելու հնարաւորութեան համար:
- Աղօթե՛ք Կիւմրի քաղաքին մէջ ACM-ի նոր աւետարանչատան համար, որպէսզի այն ծառայէ Աստուծոյ փառքին համար:

Մենք կ'որախանանք ACM-ի 20 ամեակը տօնելով: Օգոստոսին մեր միսիոնարական խումբը կը պատրաստուի մեկնիլ Հայաստան: Եթէ միանալու փափաքողներ կան, ապա կը խնդրենք մեզ հետ կապուիլ հետեւեալ ել. հասցեով՝ **info@acmaust.org**

Աստուծոյ հնազանդիլ

Բոլոր մարդկանց համար ամենադժուար բաներէն մէկը հնազանդ ըլլալ սորվիլն է: Հնազանդութիւնը զաւակներու, դեռահասներու, չափահասներու, նախագահներու եւ թագաւորներու համար է: Մենք բոլորս հնազանդելու մէջ դժուարութիւն ունինք:

Կը յիշեմ, երբ որդիս ընդամենը 10 տարեկան էր ինծի հարցուց, թէ մինչեւ որ տարիքը պէտք է ինծի հնազանդէր: Ես իրեն պատմեցի, թէ Իսահակը մօրութով չափահաս տղամարդ մըն էր, երբ հնազանդեցաւ իր հօրը եւ ընդունեց ամուսնութեան համար հայրական երկրէն կին առնելու հօր առաջարկին: Անոր անմիջական արձագանքը հետեւեալը եղաւ. ԱՄՈՒՄՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵԳԻՊՏՈՍ ՊԻՏԻ ՉԻՋՆԵՄ:

«Որդիներ, ձեր ծնողներուն հնազանդ եղէ՛ք Տէրոջմով, վասն զի այդ է արժանը: Պատուէ՛ք ու հայրդ ու մայրդ. (որ առաջին պատուիրանքն է խոստումով) որպէս զի քեզի աղէկ ըլլայ ու երկար կեանք ունենաս երկրի վրայ» (Եփես. 6:1-3):

Անառակ որդին չհնազանդեցաւ իր հօրը, ան իր ժառանգութեան բաժինը պահանջեց, որպէսզի երթար ու ծախսէր ինչպէս կամենար, բայց շուտով վերադարձաւ, երբ ամէն ինչ կորսնցուցած էր: Ապաշխարութեամբ զոջաց իր անհնազանդութեան համար եւ հօրը խնդրեց իրեն տուն ընդունիլ, որպէս ծառայ:

«Հայրեր, ձեր որդիները մի՛ բարկացնէք, հապա զանոնք մեծցուցէք Տէրոջը վարժութիւնովն ու խրատովը» (Եփես. 6:4):

Յովնանը մարգարէ մըն էր, ով ճանչցուած է որպէս Աստուծոյ չհնազանդող միակ մարգարէն: Արդեօք կ'ուզէի՞ք ճանչցուիլ, որպէս Աստուծոյ չհնազանդող միակ անձնատրութիւն:

Յովնանը շատ լաւ գիտէր, որ Նինուէն չար մարդկանցով բնակեցուած քաղաք էր եւ արժանի չէին Աստուծոյ ողորմութեանը: Յովնանը Նինուէն կործանուած կ'ուզէր տեսնել, բայց Աստուած փրկութեան ծրագիր մը ունէր: Յովնանը զնեց տոմար, նստաւ նաւը ու փախաւ Աստուծոյ ներկայութենէն, բայց Տէրը հրամայեց մեծ ձուկին, որ զինք կլլէ: Երեք

օր Յովնանը մնաց խաւարին մէջ, երեք օրուայ ընթացքին ան մերժեց Աստուծոյ կամքը կատարել, երեք օր անոր սիրտը կարծրացած էր: Վերջապէս ապաշխարեց եւ խելքի եկաւ:

Ամպերը հնազանդեցան, փոթորիկները հնազանդեցան, ալիքները հնազանդեցան, նաւաստիները հնազանդեցան, մեծ ձուկը հնազանդեցաւ, բայց Յովնանը չհնազանդեցաւ:

Կը խորհիմ թէ իրաքանչիւրիս կեանքը ձեռով մը նման է Յովնանի փորձառածին: Աստուած մեզի կոչ կ'ընէ, բայց մենք կ'ապաստամքինք: Մենք Աստուծմէ զատ ամէն բանի մէջ կեանքի իմաստ կը փնտռենք, մինչեւ որ կէտի մը կը հասնինք, ուր վերջապէս կը գիտակցինք մեր անկարողութիւնը եւ կուգանք այն եզրակացութեան, որ փրկութիւնը Տէրոջմէն է:

Եթէ տակաւին Յովնանի գիրքը չէք կարդացած, ապա կը քաջալերեմ կարդալ այն: Այնտեղ շուտով պիտի տեսնէք, թէ որքան կարեկցող ու սիրող է մեր Աստուածը, Ան ամէնի վրայ բարձրեալ Աստուած է, եւ թէ որքան պէտք է սորվինք հնազանդ ըլլալ Աստուծոյ, Անոր ճամբաներուն եւ ուսուցումներուն:

Բայց Սամուէլը պատասխանեց. «Միթէ Տէրոջը առջեւ ողջակէզներն ու զոհերը Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ հաճո՞յ են: Ահա հնազանդութիւնը զոհէն ու խօսք մտիկ ընելը խոյերուն ճարպէն աղէկ է» (Ա Թագ. 15:22): Արդեօք պիտի հնազանդի՞ս Իրեն այսօր: Փրկութիւնը քուկդ կ'ըլլայ:

Հ. Գ.

«Ես Երկինք չեմ մտնէր, քանի որ մեծ բազմութեան քարոզեցի կամ Աստուածաշունչը բազմիցս կարդացի: Ես Երկինք կը մտնեմ, ինչպէս խաչի վրայի գողը, ով վերջին պահին ըսաւ. «Տէ՛ր, յիշէ՛ զիս»»:

«Սեծագոյն ժառանգութիւնը, որ մէկը կրնայ փոխանցել իր զաւակներուն եւ թոռնիկներուն, գումար կամ այլ նիւթական բաները չեն, որոնք կեանքի ընթացքին կուտակած է, այլ՝ հաւատքի եւ բնաւորութեան ժառանգութիւնը»:

Պիլի Կրեհեմ

Ստեղծուած ենք Անոր հաճութեան համար (2)

«Վասն զի մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար: Աստուած նախապէս պատրաստեց մեզ, որպէս զի անոնց մէջ քալենք» (Եփես. 2:10)

Նախորդ յօդուածին մէջ տեսանք, թէ Աստուածաշունչը շատ յստակ կը խօսի ստեղծագործութեան նպատակի վերաբերեալ: Աստուած Իր ամբողջ ստեղծագործութիւնը ըրաւ Իր հաճութեան համար (Յայտ. 4:11): Աստուած կը հաճենայ Իր ստեղծագործութիւնով, այո՛, նոյնիսկ Իր ստեղծած բնութիւնով: Սաղմոս 19-ին մէջ կ'ըսուի, թէ երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ: Այսպիսով, Աստուած կը հաճենայ Իր ստեղծագործութիւնով, քանի որ բնութիւնը Անոր փառքը կը հռչակէ: Մենք տեսանք, թէ Աստուած նաեւ մարդուն ստեղծեց Իր հաճութեան համար:

Չնայած որ մարդը ստեղծուած էր Աստուծոյ հաճութեան համար, մարդը մեղանշելով Աստուծոյ փառքէն պակսեցաւ (Հռովմ. 3:23): Աստուած չհաճենար մարդու մեղաւոր եւ ինկած վիճակով: Այդ պատճառով Յիսուսը Նիկողէմոսին ըսաւ, թէ պէտք է վերստին ծնիլ (Յովհ. 3:3): Ասիկա կը նշանակէ, թէ հոգեւորապէս ինկած վիճակի մէջ եղող մարդը պէտք է Յիսուսի միջոցով նոր արարած դառնայ: Ինչ որ ձեռով, Աստուած ինկած մարդուն մէջ, ով մեղքի պատճառով հոգեւորապէս կործանուած է, Աստուծոյ փառքէն պակասած է եւ այլեւս Աստուծոյ հաճութիւնը անոր վրայ չէ, պէտք է նոր մարդ մը ստեղծէ:

Այս նոր ստեղծագործութիւնը, վերստին ծնունդը, միայն Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով հնարաւոր է: Այդ կը պատահի, երբ անձը կը գիտակցի իր մեղաւորութիւնը եւ կը հաւատայ Քրիստոսին: Այդ ժամանակ մարդը Քրիստոս Յիսուսով վերստին կը ստեղծուի՝ ոչ միայն Աստուծոյ հաճութիւնը վայելելու համար, այլեւ՝ բարի գործեր ընելու համար (Եփես. 2:10):

Ուշադրութիւն դարձուցէք, որ համարին մէջ կ'ըսուի թէ մենք ստեղծուած ենք Քրիստոս Յիսուսով: Յիշենք, որ ամէն բաները ստեղծուեցան

Յիսուսի համար եւ Անոր միջոցով (Յովհ. 1:1-3, Կող. 1:16): Ակնյայտ է, որ ստեղծագործութիւնը Յիսուսի միջոցով եղաւ, Աստուծոյ Խօսքով (Ծննդ. 1:3, 6 եւ այլն):

Այնուամենայնիւ, վերստին ծնունդ ունենալէ ետք, Յիսուս Քրիստոսով ստեղծուելէ ետք, աւելի յատուկ նպատակ մը կը նշմարուի հորիզոնին վրայ: Երբ ես եւ դուն կը հաւատանք Տէր Յիսուսին եւ կը սկսինք ճանչնալ զինք, մենք նոր եւ յատուկ նպատակ մը կ'ունենանք, որու համար ստեղծուած ալ էինք՝ բարի գործեր ընելու համար, կ'ըսէ Աստուածաշունչը:

Յստակեցնելու համար նշենք, թէ մենք բարի գործերով չենք փրկուիր, այլ կը փրկուինք բարի գործեր կատարելու համար: Հետեւաբար, Քրիստոս Յիսուսով նոր ստեղծուած անձը (վերստին ծնած, փրկուած անձը) բարի գործեր կ'ունենայ իր կեանքին մէջ:

Նախ, պէտք է գիտակցինք, որ բարի գործերը սեփական ուժով չենք կրնար իրագործել: Իրականութեան մէջ, Աստուած չի հաճեցնար մեր կատարած գործերով, քանի որ նոյնիսկ մեր լաւագոյն գործերը հաճելի չեն Իրեն (Եսայ. 64:6): Մենք պէտք է քալենք բարի գործերու ճամբայէն, որը Աստուած Ինքը նախատեսած է մեզի համար: Այլ խօսքով՝ երբ Աստուած Քրիստոս Յիսուսով մեզի նորէն ստեղծեց, Ան նաեւ մեզ դրաւ այն ճամբուն վրայ, որը նախատեսած էր մեզ համար, որպէսզի ատոր մէջ քալենք: Հետեւաբար, մեր գործը Իրեն հնազանդիլ եւ մեզ համար Իր նախատեսած բարի գործերու ճամբայով ընթանալը պէտք է ըլլայ: Մինչ կը շարունակենք քալել բարի գործերու ճամբայով (Աստուածաշունչին հնազանդելով), որու համար ստեղծուած էինք, Աստուած կը հսկէ եւ կ'օգնէ մեզ այն կատարելու եւ աւարտին հասցնելու մէջ (Փիլիպ. 1:6-ում):

Աստուած մեզ չփրկեց պարզապէս դժոխքէն ազատելու համար. Ան փրկեց մեզ, որպէսզի բարի գործեր կատարենք.

- Մերքի պատճառով Աստուծոյ պատկերը մեր մէջ աղաւաղուեցաւ: Աստուած մեզ ետ վերադարձնելով մեր մէջ վերականգնեց Իր պատկերը: Հետեւաբար, մենք աշխարհի մէջ պէտք է արտացոլենք Իր բնաւորութիւնը եւ բարութիւնը (Մատթ. 5:16, Հռովմ. 13:14, Եփես. 4:24):

- Գարձեալ, Աստուածաշունչը կը սորվեցնէ, թէ Յիսուսը Որթն է եւ մենք անոր ճիւղերն ենք (Յովհ. 15:5): Հետեւաբար, Տէրը մեր մէջ գործելով բարի գործեր պիտի արտադրէ: Աստուածաշունչը այն՝ Հոգիի պտուղ կը կոչէ (Սուրբ Հոգին ունենալու արդիւնքը, փրկուած անձնատրութիւն ըլլալու արդիւնքը, Գաղ. 5:22-23):
- Բարի գործերը գործողութիւններու ցանկ մը չեն, որ պէտք է կատարենք: Ես չեմ նսեմացնէր այն բաները, որոնք յաճախ կը դիտուին որպէս բարի գործեր, ինչպիսին է՝ աղօթելը, եկեղեցի յաճախելը, տասանորդ տալը, ծառայութեան մէջ ներգրաւուիլը, աղքատներուն հոգալը, դրացիին սիրելը եւ այլն... Այնուամենայնիւ, այն աւելի է, քան պարզապէս որոշ գործողութիւններու ցանկին հետեւիլը: Բարի գործեր ընելը ցանկի հետեւիլ չէ, այլ ապրելակերպ մըն է: Պօղոսը չգրեց մեզի, որպէսզի ցանկի մը հետեւինք, այլ ապրելակերպ մը որդեգրենք, որ Աստուած կ'ուզէ ունենանք եւ ստոր մէջ ընթանանք (Հռովմ. 12:1):
- Վերջապէս, Աստուծոյ ուզած բարի գործերու ճամբան փոխուած կեանքն է՝ աստուածային կենսակերպ մը, ոչ թէ նախքան վերստին ծնելու ապրած կենսակերպը, այլ Յիսուսով ծնունդ ստացած նոր կեանքը, որուն մէջ կ'արտացոլուի Աստուծոյ պատկերը: Անհնար է մէկը փրկուի, բայց իր կեանքը չփոխուի: Աստուած մարդկանց կը փոխէ Իր նպատակներուն համար, այսինքն՝ աշխարհի մէջ Իր բնատրութիւնը եւ բարութիւնը արտացոլելու համար (Յակ. 2:26): Հետեւաբար, եթէ անձը չունի փոխուած կեանք եւ այն շարունակաբար չի աճիր, ապա այդ մարդը Քրիստոսի մէջ հաստատուած չէ: Այնուամենայնիւ, եթէ անձը փոխուած կեանքով կ'ապրի եւ այն հետզհետէ կ'աճի, ապա այդ մարդը հաստատուած է Քրիստոսի մէջ, եւ աճը շուտով ակնյայտ պիտի ըլլայ (Յովհ. 15:4, Ա Տիմ. 4:15):

Արդեօք Որթին վրայ հաստատուած էք: Արդեօք հիմնուած էք Յիսուսի վրայ: Արդեօք փրկուած էք բարի գործերու համար: Եթէ այո, ձեր ապրելակերպը պէտք է արտացոլէ ձեր հաւատքը:

Բաֆֆի Չափարեան

Եկէ՛ք սուտ չխօսինք զիրար

«Ուստի ստութիւնը մէկդի ձգելով՝ ճշմարտութիւնը խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին, վասն զի մենք իրարու անդամներ ենք» (Եփես. 4:25):

Այս համարին մէջ երկու բառեր ուշադրութիւնս գրաւեցին, առաջինը՝ «ճշմարտութիւնը», եւ երկրորդը՝ «իրարու»: Այս պատուիրանը Պօղոս առաքեալը գրեց եկեղեցիին, աշխինքն՝ այն մարդկանց, ովքեր ընդունած են Տէր Յիսուս Քրիստոսին: Հաւատացեալը սուտ խօսելու իրատունք չունի, եւ Պօղոսը կը նշէ թէ ինչու. «Վասն զի մենք իրարու անդամներ ենք»: Ասիկա սուտ չխօսելու ամենակարեւոր պատճառն է: Երբ Տէրոջը ընդունեցինք, մենք Քրիստոսի մարմնի անդամները եղանք, եւ որպէս մարմնի անդամ, մենք իրարու կարիք ունինք՝ խնամքի, պաշտպանութեան, օգնութեան... Այն հաւատացեալը, ով կ'ըսէ թէ ինքը ոչ ոքի կարիք չունի, տակաւին չէ ընկալած թէ ինչ է Եկեղեցին:

Քրիստոսը Եկեղեցիին գլուխն է, մարմնի գլուխը, եւ մենք Անոր անդամներն ենք: Շատ ցաւալի պիտի ըլլար եթէ աչքը մարմնի միւս անդամներուն սուտ խօսէր, օրինակ՝ ոտքին. պարզապէս պատկերացուցէք, երբ աչքը ճշմարտութիւնը չյայտնէ ոտքին. երբ ան մարմնի վերին մասը տեղադրուած ըլլալով տեսներ վտանգը եւ ճշմարտութիւնը չյայտնէր: Ի՞նչ կը պատահէր այդ ժամանակ: Ոտքը կը սայթաքէր եւ կը վնասուէր: Այստեղ հարկ է ընդգծել, որ մեծ է հաւանականութիւնը, որ աչքը նոյնպէս կը վնասուէր: Նոյնը տեղի կ'ունենայ, երբ մենք սուտ կը խօսինք իրար, մենք կը վնասենք մեր եղբօրը կամ քրոջը, բայց միւնոյն ժամանակ կը վնասենք ինքներս մեզ:

Իսկապէս աղետալի վիճակ կը ստեղծուէր, եթէ ձեռքը փորձէր խաբել բերանին. օրինակ՝ ձեռքը բռնէր ճաշով լի դգալը եւ բերանը լայն բանար սնունդը ընդունելու համար, բայց վերջին պահին ձեռքը ետ քաշէր դգալը եւ լաւ մը ծիծաղէր բերանին վրայ... Ինչպիսի՞ խղճալի տեսարան: Երբեմն նոյնը կը տեսնենք եկեղեցիներուն մէջ, երբ կը խաբենք հաւատակիցներուն կամ առնվազն ամբողջ ճշմարտութիւնը չենք ըսէր: Երբ իրար սուտ կը խօսինք, իրականութեան մէջ մենք չենք գիտակցիր, որ բացի անկէ, որ ինքներս մեզ կը վիրատրենք կամ այն անդամին

որուն սուտ խօսեցինք, մենք կը վնասենք նաեւ ամբողջ մարմնին, եւ ասիկա է պատճառը, թէ ինչու Պօղոսը տուաւ վերոյիշեալ պատուիրանը:

Մենք մէկ մարմնի անդամներ ենք, ինչպէս նաեւ մէկ բանակի մէջ ծառայող զինուորներ, եւ Քրիստոսը մեր գլխաւոր հրամանատարն է: Որքան ողբերգական կ'ըլլար, երբ զինուորները կամ սպաները մարտադաշտին մէջ իրար խաբէին: Յաղթանակը նման բանակներէն շատ հեռու է:

Գործք Առաքելոց 5-րդ գլխուն մէջ Անանիան եւ Սափիրան սուտ խօսելու համար խստօրէն պատժուեցան Աստուծոյ կողմէ: Արդեօ՞ք պատիժը այդքան ծանր էր, քանի որ անոնք սուտ խօսեցան Պետրոս առաքեալին (իրականութեան մէջ Սուրբ Հոգիին սուտ խօսեցան, Գործք 5:3): Արդեօք կարելի՞ է սուտ խօսիլ սովորական հաւատացեալներուն: Արդեօք մեծ մե՞ղք կը համարուի, եթէ հովիւներուն եւ եկեղեցիի երէցներուն սուտ խօսինք, եւ ոչ այդքան մեծ, երբ սուտ կը խօսինք շարքային հաւատացեալներուն: Ո՛չ, սիրելիներ, պատուիրանը շատ յստակ է, պատճառը նոյնպէս:

Որքա՞ն ամօթալի է, երբ կը լսենք թէ անհաւատներ մատնացոյց կ'ընեն, թէ այս կամ այն եղբայրը կամ քոյրը ստախօս է: Եթէ այս պատուիրանը կ'արգիլէ հաւատացեալներուն սուտ խօսիլ, արդեօք այն թոյլ կուտա՞յ անհաւատներուն սուտ խօսիլ: Իհարկէ ոչ: Եկէ՛ք վերոյիշենք Տէր Յիսուսի խօսքերը, որ ըսաւ. «Ձեր խօսքը ըլլայ այոն՝ այո, եւ ոչը՝ ոչ, ու ասկէ աւելին չարէն յառաջ կու գայ» (Մատթ. 5:37):

Սուտը մարմնի գործն է եւ Աստուծոյ չճանչցող մարդկանց նկարագիրը: «Բայց վախկոտներուն ու անհաւատներուն եւ պիղծերուն ու մարդասպաններուն ու պոռնիկներուն եւ կախարդներուն ու կռապաշտներուն եւ բոլոր ստախօսներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լճին մէջ պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը» (Յայտ. 21:8): Այնպէս որ, եկէ՛ք լոյսի մէջ ապրինք եւ արժանի ըլլանք այն կոչումին, որով Աստուած կանչեց մեզ:

Վարդան Սարգիսեան



Յիսուսը կ'երեւնայ Իր աշակերտներուն (Յովհ. 20:19-23)

Այդ երեկոյ տասներկու աշակերտներէն տասը ներկայ էր, երբ Տէրը կը գտնուէին: Անոր մարմինը, յարուցեալ մարմինը ենթակայ չէ մեր մարդկային մարմիններու սահմանափակումներուն: Ան կարող է ազատօրէն անցնիլ փակ դռներու միջով: Յիսուս կանգնեց անոնց մէջտեղ եւ ըսաւ. «Խաղաղութիւն ձեզի»: Երբայերէն ողջոյնի այս ձեւը իր մէջ աւելի մեծ իմաստ կը պարփակէ, քան պարզապէս սքրեսէ կամ բախումէ հեռու մնալ ցանկանալը: Լայն իմաստով, այն բարօրութիւն եւ հանգստութիւն մաղթել կը նշանակէ: Քանի որ Տէրը յարութիւն առաւ, վերջապէս Իրեն հետեւող տղամարդիկ եւ կանայք կարող են իրական խաղաղութիւն ունենալ իրենց սրտերուն մէջ:

Այնուհետեւ Տէրը Իր աշակերտներուն ցոյց տուաւ Իր ձեռքերն ու խոցուած կողը: Ասիկա վճռական ապացոյց էր, որ Ինքը յարութիւն առած էր. այդ վկայութիւնն էր այն բանին, որ իրենց առջեւ կանգնածը նոյն Անձն էր, որուն հետեւած էին Գալիլիայէն մինչեւ Երուսաղէմ: Այլեւս լրացուցիչ փաստերու կարիք չկար: Աշակերտները ուրախացան, երբ տեսան Տէրոջը:

Բայց աշակերտները կատարելիք աշխատանք ունէին: Նախորդ երեք տարիներու ընթացքին անոնք Իրմէ սորված էին: Այժմ աշակերտները պէտք է դուրս գային Իր մասին վկայելու համար: Ան ուղարկեց իրենց, ինչպէս Հայրը ուղարկած էր զինք: Ի՞նչ նկատի ունէր Տէրը: Կան որոշ տարբերութիւններ Տէրոջը ուղարկուած ըլլալու եւ աշակերտներու ուղարկուած ըլլալու միջեւ: Ան ուղարկուած էր փրկագործութիւնը կատարելու համար: Ան, որպէս Աստուծոյ Գառ եկաւ, որպէսզի վերցնէ մեր մեղքերը: Մենք երբեք չենք կրնար այդ բանը ընել: Ամէն պարագային, այդ աշխատանքը կատարուած է մէկ անգամ. այն ամբողջական է եւ աւարտուն՝ բոլոր դարերու համար:

Բայց կան շատ որոշակի նմանութիւններ մեր եւ Հօր կողմէ Յիսուսի ուղարկուած ըլլալու միջեւ: Ան ուղարկուած էր Աստուծոյ կամքը կատար-

րելու: Ան առանց դժգոհելու եկաւ եւ կատարեց Աստուծոյ կամքը: Հօր հնազանդելը նաեւ մեր պարտականութիւնն է: Տէր Յիսուսը եկաւ այնպիսի աշխարհ, ուր Աստուած կ'ատեն, հետեւաբար Ան արհամարհուած էր մարդոց կողմէ: Եթէ ուղարկուած ենք ինչպէս Որդին ուղարկուած էր, ապա մենք նոյնպէս կարող ենք ակնկալել, որ պիտի մերժուինք աշխարհի մը մէջ, որը Աստուած կ'ատէ: Տէրը ըսած է, որ եթէ աշխարհը զինք ատեց, մեզ ալ պիտի ատէ: Մենք ուղարկուած ենք Քրիստոսի անունով նախաստինք կրելու:

Այնուհետեւ Տէրը աշակերտներուն վրայ փչեց եւ ըսաւ. «Առէ՛ք Սուրբ Հոգին»: Ոմանք կը խորհին թէ այս խօսքերու եւ Հոգեգալուստի միջեւ տարածայնութիւն կայ: Չէ՞ որ Հոգեգալուստը տեղի ունեցաւ 50 օր անց: Արդեօք Սուրբ Հոգին երկու անգամ եկաւ: Ո՛չ: Աւելի ճիշտ է մտածել, որ Տէրը Իր այս քայլով նախապատրաստեց Իր աշակերտներուն Պէնտէկոստէի օրուայ Սուրբ Հոգիի գալստեան համար: Իրականութեան մէջ, ասիկա խոստում էր, որ Սուրբ Հոգին պիտի գար ու իրենց զօրացնէր Աստուծոյ ծառայութեան համար:

Այժմ անոնք Աւետարանը քարոզելու պարտականութիւնը ունէին: Բայց ի՞նչ կը նշանակէ Յիսուսի «որոնց մեղքերը որ թողուք, թողուած ըլլայ անոնց եւ որոնց մեղքերը որ ետ բռնէք, բռնուած ըլլայ» խօսքը: Յստակ է, որ այն չի նշանակէր, թէ երկրի վրայ որեւէ մէկը մեղքերը ներելու իշխանութիւն ունի: Ասիկա միայն Աստուծոյ առանձնաշնորհումն է: Մենք ոչ ալ կրնանք ներումը հետ պահել այն մարդոցմէ ովքեր ճշմարտապէս կ'ապաշխարեն: Մեղքեր թողելը կամ կապելը Աւետարանի քարոզչութեան ազդեցութիւնն է: Երբ Աւետարանը կը քարոզենք, ոմանք հաւատքով կ'արձագանքեն եւ կ'ազատին իրենց մեղքերէն, ուրիշներ՝ կը մերժեն հաւատալ եւ կը մնան իրենց մեղքերուն մէջ: Մեղքերը թողելը կամ կապելը Աստուծոյ պատասխանատուութեան մէջ կը մտնէ, բայց մենք Աստուծոյ Խօսքի հեղինակութեան լոյսի ներքոյ զղջացող մեղաւորին կրնանք ըսել, թէ իր մեղքերը ներուած են: Մենք նաեւ անապաշխար մարդուն կրնանք ըսել, թէ ան տակաւին իր մեղքերուն մէջ է:

Յիսուսը Թովմասին կը յայտնուի (24-29)

Թովմասը բացակայ էր Տէրոջ առաջին այցիւն ժամանակ, բայց երկրորդին ներկայ էր:

Թովմասի մասին մեզ շատ բան յայտնի չէ: Յովի. 11:16-ի մէջ «մե՛նք ալ երթանք, որպէս զի Անոր հետ մեռնինք» խօսքէն կարելի է եզրակացնել, որ ան յոռետես աշակերտ էր: Ան էր, ով Յովի. 14:5-ի մէջ Տէրոջը ըսաւ. «Չենք գիտեր ո՞ր կ'երթաս եւ ինչպէ՞ս կրնանք ճամբան գիտնալ»:

Յիսուսի առաջին այցէն ետք Թովմասի արտայայտած խօսքերը հիմք հանդիսացան, որ այսուհետ ան կոչուի կասկածող աշակերտ: Մենք կարող ենք հարց տալ, թէ ինչու ան շաբթուայ առաջին օրը ներկայ չէր միւս աշակերտներուն հետ, երբ Տէրը յայտնուեցաւ իրենց: Արդեօք կը վախնա՞ր, որ կրօնական առաջնորդները կը սպաննէին զինք: Ի՞նչ պատահեցաւ այն անձին, ով ըսած էր. «Մե՛նք ալ երթանք, որպէս զի Անոր հետ մեռնինք»: Արդեօք ան աւելի՞ յուսահատած էր, քան միւսները: Մենք չենք գիտեր: Անոնք նոյնպէս յուսահատած ու շփոթուած էին: Էմմաուսի ճամբու վրայ եղող երկու աշակերտները նոյնպէս խորապէս մտահոգուած էին, բայց սա պատճառ չհանդիսացաւ, որ անոնք յարութեան օրը աշակերտներուն հետ չըլլային: Ինչ ալ ըլլար պատճառը, Թովմասը այնտեղ չէր, երբ Տէրը յայտնուեցաւ միւս աշակերտներուն, հետեւաբար ան շաբաթ մը եւս մնաց իր անհաւատութեան մէջ:

Այդ շաբթուայ ընթացքին աշակերտները Թովմասին տեսնելով ուրախալի լուրը փոխանցեցին. «Մենք տեսանք Տէրը»: Ան անհաւատութեամբ արձագանքեց: Թովմասը անշուշտ Էմմաուսի երկու ճանապարհորդներու նման լսած էր, որ կիներէն ոմանք պնդած էին, որ Տէրոջը տեսած էին: Բայց Թովմասը որոշակի ապացոյցներ կը պահանջէր: Եթէ Անոր ձեռքերուն վրայ բեւեռներուն նշանը չտեսնէր ու մատը բեւեռներուն տեղը չխոթէր եւ իր ձեռքը Անոր կողը չխոթէր՝ պիտի չհաւատար: Իրականութեան մէջ Թովմասը շատ բացասական էր իր պնդման մէջ. Ես երբեք պիտի չհաւատամ:

Յաջորդ կիրակի Թովմասը միւս աշակերտներուն հետ էր: Տէրը դարձեալ մտաւ փակ սենեակ եւ ողջուեց Իր աշակերտներուն: Այնուհետեւ դիմեց Թովմասին, ճշգրտօրէն իմանալով, թէ ինչ ըսած էր ան շաբթուայ ընթացքին, եւ որպէսզի ան կարողանար հաւատալ, հրաւիրեց զինք որ ընէր ճիշտ այն ինչ ըսած էր: Այս դէպքով Տէրը ցոյց տուաւ Իր աստուածութիւնը: Այդ մէկ շաբթուայ ընթացքին որեւէ մէկը Տէրոջը չէր տեսած, որպէսզի հաղորդէր Անոր Թովմասի խօսքերը: Ան գիտէր, առանց

որեւէ մէկու ըսելուն:

Մեզի չըսուիր, թէ Թովմասը ընդունեց Տէրոջը վերքերուն դպչելու հրաւերը, բայց շատ անհաւանական է, որ ան այդպէս վարուէր: Տէրը գիտէր անոր սրտի խորհուրդները եւ պատրաստ էր թոյլ տալու անոր՝ դպչել Իր վերքերուն: Ասիկա բաւարար էր, որ Թովմասը կարողանար հաւատալ:

Թովմասը ճանչցաւ թէ ով է Տէր Յիսուսը: Իր «Իմ Տէրս եւ իմ Աստուածս» բացականչութիւնը ցոյց տուաւ, որ ան հաւատաց թէ Յիսուսը Աստուած է: Հրեաները Աստուծոյ երկրպագութեան ժամանակ կ'օգտագործէին այդ երկու տիտղոսները: Թովմասի բոլոր կասկածները յաւիտեանս հեռացան: Ան տեսած էր Տէրոջը եւ համոզուած էր, որ Ան Աստուած է եւ ողջ է:

Երբ Սիմոն Պետրոսը արտայայտեց հաւատքի դաւանութեան՝ «Դուն եւ Քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին» խօսքերը, Տէրը իրեն ըսաւ. «Երանի՛ քեզի, Սիմոն, Յովնանի որդի. վասն զի մարմինը եւ արիւնը քեզի չյայտնեցին ասիկա, հապա իմ Հայրս որ Երկինքն է»: Թովմասին մման խօսք չըսուեցաւ, չնայած որ կասկած չկայ, որ ան նոյնպէս երանելի էր, քանի որ դաւանեց թէ Յիսուսը իր Տէրն ու Աստուածն է: Փոխարէնը, օրհնութիւն կայ բոլոր անոնց համար, ովքեր ի տարբերութիւն Թովմասի, Տէրոջը ֆիզիկապէս չտեսած պիտի հաւատան Իրեն, որ Ան Աստուծոյ Որդին է, որ Ան իմ Տէրս ու Աստուածս է:

Ի՞նչ կը սորվինք Թովմասի կեանքի այս դէպքէն: Քրիստոնէական կեանքը հաւատքի կեանք է: Մենք քրիստոնէական կեանքը հաւատքով կը սկսինք, եւ շարունակութիւնը նոյնպէս հաւատքով կ'ընենք: Երբայեցիս 11-ը կ'ըսէ, թէ առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճելի ըլլալ: Մենք պէտք է շարունակաբար հաւատք ցուցաբերենք. մենք ամէն ժամանակ Աստուծոյ կը հաւատանք:

Տոն Սթորմըր



«Ով Տէր, ժողովուրդներուն մէջ քեզ պիտի գովեմ եւ Սաղմոս պիտի երգեմ քեզի ազգերուն մէջ. վասն զի մեծ է քու ողորմութիւնդ մինչեւ երկինք ու քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը» (Սաղմոս 57:9-10):

Հնազանդութեան դասը

Մարդ մը քնացած ատեն, յանկարծ սենեակը լոյս մը ծագեցաւ եւ Աստուած յայտնուեցաւ: Տէրը մարդուն ըսաւ որ Իրեն համար գործ մը ունէր ընելիք եւ ցոյց տուաւ իր տնակին առջեւ գտնուող մեծ ժայռը: Տէրը բացատրեց թէ կ'ուզէր որ մարդը ժայռը հրէ իր բոլոր ուժով:

Ուստի մարդը ամէն օր այդ ըրաւ: Տարիներով աշխատեցաւ արեւածագէն մինչեւ իրիկուն, ուսերը պաղ զանգուածին տուած բոլոր ուժովը հրեց անշարժ ժայռը:

Ամէն գիշեր մարդը ուժասպառ տնակ կը վերադառնար ցաւերով եւ կը զգար որ օրը պարսպ անցուցած էր: Մինչ ան յուսահատութեան նշաններ ցոյց կու տար, սատանան սկսաւ կասկածներ դնել անոր յոգնած մտքին մէջ - ասիկա հակառակորդին լաւագոյն գործելակերպն է:

- Երկար ատենէ կը հրէս այս ժայռը որ տեղէն բնաւ չէ շարժած: Ինչո՞ւ ինքզինքդ կը չարչարես ասոր համար: Ասիկա քու գործդ չէ, քիչ մը հրէ եւ բաւականացիր:

Յոգնած մարդը որոշեց այդպէս ընել, սակայն նախ ուզեց իր յոգնած խորհուրդները աղօթքով Աստուծոյ տանիլ:

«Տէր իմ», - ըսաւ ան, - երկար ժամանակէ ի վեր ամբողջ ուժովս կ'աշխատիմ Քու ինձի ըսած գործդ ընել: Սակայն մինչեւ հիմա, ոչ իսկ սանթիմ մը ժայռը չէ շարժած: Ի՞նչ է սխալը, ինչո՞ւ կը ձախտդիմ արդեօք:

Տէրը կարեկցութեամբ պատասխանեց. «Որդիս, երբ քեզի առաջարկեցի որ Ինձի ծառայես, դուն ընդունեցիր: Քեզի ըսի որ քու գործդ է ժայռը հրել բոլոր ուժովդ, եւ այդպէս ըրիր: Երբեք քեզմէ չխնդրեցի որ վերցնես զայն: Քու գործդ հրել էր: Հիմա ուժասպառ Քովս եկած ես եւ կը խորհիս թէ ձախտդած ես: Բայց այդպէս չէ: Նայէ ինքզինքդ: Բազուկներդ զօրացած են մկաններով, կռնակդ փայլուն է եւ ողորկ, ձեռքերդ յարատեւ ճնշումէն կոշտացած են, իսկ սրունքներդ զօրացած են եւ պնդացած: Ընդդիմադրութեամբ դուն շատ մեծցար եւ կարողութիւններդ գերազանցեցին այն ինչ որ նախապէս ունէիր: Ծիշդ է որ ժայռը

չշարժեցիր, բայց քու կոչումդ հնազանդ ըլլալ եւ հրել էր, հաւատքդ գործածելով եւ Իմ իմաստութեանս վստահելով: Այդ ըրիր որդիս, հիմա Ես ժայռը պիտի վերցնեմ»:

Ամէն գնով, փորձենք լեռներ շարժող հաւատք ունենալ, սակայն յըստակ գիտնանք թէ տակաւին Աստուած է զանոնք շարժողը (Մատթ. 17:20):

Քաղուած՝ Ռիթարամ Դաւիթեանի
«Բարեպառուղ ձիթենիս» գրքէն

Լուրեր ACM-ի գրասենեակէն

Հայ քրիստոնէական առաքելութիւն.

Հասցնել Աւետարանը Հայաստանի ամէնաաղքատներուն

Մինչ կը բոլորենք ACM-ի 20-րդ ամեակը, կ'ուրախանանք այն բոլոր գործերով, որոնք Աստուած ըրած է, եւ Անոր զօրաւոր գործերը տեսնելով մենք մեզի օրհնուած կը զգանք:

ACM-ը համեստ սկիզբ մը ունէր, սպազայի հանդէպ ծրագիր կամ տեսիլք չկար, բայց շուտով Տէրը եկաւ եւ վերահսկեց ամէն բան եւ օրեց օր առաջնորդեց մեզ:

Ամէն ինչ սկսաւ մէկ այցելութիւնով մը, բայց Տէրը Իր մտքին մէջ այլ նպատակ ունէր: Մենք օրհնուած ենք Իր ձեռքին գործիքները դառնալով: Ահա մեր ճամբորդութեան հակիրճ նկարագրութիւնը:

Մենք քաշալերուած ենք աշխարհի բազմաթիւ կազմակերպութիւններու, եկեղեցիներու եւ հաւատացեալներու աջակցութեամբ, ովքեր մեր կողքին եղան՝ իրենց աղօթքներով, նիւթական աջակցութեամբ, ինչպէս նաեւ ծառայութեան դաշտը անձամբ այցելելով՝ ականատեսը եղան այն առաքելութեանը, որ Տէրը սկսած էր: Այո՛, միսիոնարութիւն կը նշանակէ՝ Աստուած գործի մէջ, եւ մենք այս եզակի ծառայութեան վկաները եղանք:

ACM-ը այսօր գրանցուած է, որպէս մարդասիրական կազմակեր-

պութին Աստրալիոյ, Հայաստանի եւ Ամերիկայի Միացեալ նահանգներուն մէջ: Ընդհանուր հաշիւով այն ունի խորհուրդի 13 անդամ:

Մեր առաջին կոչումը եղաւ աջակցել եւ հաստատել Մանկանց աւետարանչութեան ընկերակցութիւնը Հայաստանի մէջ: Անկէ անմիջապէս ետք սկսեցինք կարիքաւոր ընտանիքներու աջակցութեան ծրագիրը: Ասիկա ծառայութիւն մըն է, որ տարբեր երկրներէն անհատներ ամսական հիմունքներով կարող են հովանաւորել Հայաստանի կարիքաւոր ընտանիքներէն մէկը:

Բժշկական օգնութիւնը եւ ձմեռուայ ամիսներու վառելափայտի եւ ջերմութեան ապահովումը դարձաւ մեր յաջորդ հիմնական խնդիրներէն մէկը: Մեր խնամքին տակ շատ ընտանիքներ ունենալով, անոնց մանուկներն ու երիտասարդները դարձան մեր ուշադրութեան յաջորդ ոլորտը: Այսօր մենք ունինք երկու երիտասարդաց հանդիպումներ եւ մանկական խմբակներ Հայաստանի տարբեր գիւղերուն մէջ:

Մենք նաեւ քրիստոնէական գրականութիւն կը հրատարակենք ու կը բաշխենք, ինչպէս նաեւ Աստուածաշունչեր, եւ նաեւ «Ազդարարութեան փող» երկամսեայ հոգեւոր թերթը, որը երեք լեզուներով կը հրատարակուի ու ձրիաբար կը բաշխուի Հայաստանի 58 եկեղեցիներու ու ամբողջ աշխարհին մէջ:

Բեռնարկը դրկելը դարձաւ շատ անհրաժեշտութիւն: Այս տարի մեր 18-րդ բեռնարկը կը ճամբենք: Ասիկա Աստրալիայէն դրկուող ապրանքներ են, որոնք կը բաժնուին Հայաստանի ամենաաղքատ խաւին եւ նաեւ Հայաստանի մէջ Սուրիոյ պատերազմէն ապաստանած մեր հայրենակիցներուն:

Տերը Կիւմրի քաղաքին մէջ մեզ օրհնեց մանկապարտէզի շէնքով մը, որը հսկայական նորոգութեան կարիք ունի, եւ նաեւ համեստ աւետարանչատուն մը, որպէսզի գործածուին Տերոջ փառքին համար:

Կը Խնդրենք ձեր աղօթքներով միանալ մեզ մինչ Տերոջը առջեւ շնորհակալութիւն յայտնելու կուգանք այն բոլոր հրաշալի աշխատանքին համար, որը Ան կ'ընէ հայրենիքէն ներս: Այո՛, ձեր աղօթքներն ու աջակցութիւնը շատ ողջունելի են, քանի դեռ մեր ծառայութիւնը Տերոջմով կ'ընդլայնուի:

ACM-ի յանձնախումբ